# ԾՐԱԳԻՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՆՈԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

## 2026-2031թթ.



Հայաստանի կինոյի հիմնադրամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

II. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

III. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

IV. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼ

V. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

VI. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (KPIs)

VII. ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼ

VIII. ԿԱՆԱՉ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

IX. ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՄԵՂՄՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

X. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

XI. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

## I. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

### Նախաբան

Կինոժառանգությունը Հայաստանի մշակութային քաղաքականության ռազմավարական առանցքներից է. այն միաժամանակ կրում է մշակութային, տնտեսական և քաղաքական արժեք: Այն ոչ միայն ազգային ինքնության ձևավորման ու պահպանման առանցքային գործիք է, այլև հասարակության պատմական փորձառության և գեղարվեստական մտածողության արտացոլումը: Կինոժառանգությունը ծառայում է որպես համազգային հիշողության պահպանման կարևոր հիմք՝ միաժամանակ խթանելով երկրի մշակութային հեղինակությունը և միջազգային ճանաչելիությունը:

Ժառանգության պահպանությունը պետության զարգացման քաղաքականության ռազմավարական բաղադրիչներից է: Այն համադրում է մշակութային արժեքների պահպանության, թվայնացման և ստեղծարար արդյունաբերության զարգացման նպատակները՝ ձևավորելով միջոլորտային համակարգ, որը խթանում է կրթության, գիտության, զբոսաշրջության և նոր տեխնոլոգիաների առաջընթացը: Կինոժառանգությունը դիտվում է որպես ազգային կապիտալ, որն ունակ է ապահովելու երկարաժամկետ տնտեսական շրջանառություն և բարձրացնել պետական ներդրումների արդյունավետությունը ստեղծարար ոլորտներում:

Միաժամանակ, կինոժառանգության կառավարումն ունի քաղաքական և միջազգային կարևոր նշանակություն. այն ամրապնդում է Հայաստանի մշակութային ինքնությունը համաշխարհային հարթակներում, բարձրացնում երկրի ներկայացուցչական ներուժը և նպաստում տարածաշրջանային մշակութային քաղաքականության ձևավորմանը՝ դառնալով գիտելիքի, տեխնոլոգիական զարգացման և մշակութային դիվանագիտության արդյունավետ գործիք:

Այս ռազմավարական նպատակների իրականացման առանցքում է ազգային կինոարխիվի ինստիտուցիոնալ և տեխնիկական ենթակառուցվածքի ձևավորումը՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան: Նոր համակարգը պետք է ապահովի կինոժապավենների և թվային նյութերի երկարաժամկետ պահպանումը, վերականգնումը և հանրային մատչելիությունը՝ համաձայն Կինոարխիվների միջազգային ֆեդերացիայի (FIAF) և եվրոպական չափանիշների: Այս մոտեցումը միտված է ոչ միայն կինոժառանգության պահպանմանը, այլև դրա ներգրավմանը

կրթական, գիտահետազոտական և մշակութային միջավայրերում: Արդյունքում կձևավորվի գիտահետազոտական և հանրությանը բաց կենտրոն, որը կհամակարգի ժառանգության կառավարումը և կխթանի միջազգային համագործակցությունը:

Հայաստանի Կինոյի հիմնադրամը (ՀԿՀ), հանդիսանալով «Հայֆիլմ» կինոստուդիայի և «Հայք» կինոստուդիայի իրավահաջորդը,ինչպես ինչպես նաև ստանձնելով «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի Կինոֆոտոֆոնո փաստաթղթերի մասնաճյուղի գործառույթները, նախաձեռնում է համապարփակ ծրագիր՝ ազգային կինոժառանգության պահպանման, թվայնացման, արխիվացման և հանրային մատչելիության ամբողջական համակարգի ձևավորման համար: Ծրագիրը նպատակ ունի ապահովելու կինոժառանգության ռազմավարական կառավարումը՝ այն դիտարկելով որպես պետական մշակութային քաղաքականության առանցքային ուղղություն և ստեղծարար տնտեսության կայուն զարգացման գործիք:

## ՀՀ-ում կինոժառանգության պահպանման խոչընդոտները

Հայաստանում կինոժառանգության պահպանման գործընթացը շարունակում է բախվել մի շարք կառուցվածքային, տեխնիկական և կառավարչական մարտահրավերների, որոնք զգալիորեն սահմանափակում են ազգային ֆոնո-, ֆոտո- և կինոժառանգության նյութական ու թվային պահպանման արդյունավետությունը:

Հիմնական խոչընդոտներն են.
**ա.** շենքային և ինժեներական ենթակառուցվածքների ֆիզիկական մաշվածությունը,
**բ.** ժամանակակից տեխնիկական հագեցվածության և լաբորատոր հզորությունների բացակայությունը,
**գ.** մասնագիտական կրթության և միջազգային համագործակցության սահմանափակ հնարավորությունները:

## ա. Շենքային և ինժեներական ենթակառուցվածքներ

Ներկայում Հայաստանի Կինոյի հիմնադրամի ենթակայությամբ գործող կինոարխիվը, որը ներառում է ավելի քան 58,000 միավոր ժապավենային նյութ, տեղակայված է «Հայֆիլմ» կինոստուդիայի տարածքում գտնվող «Հայք» կինոստուդիայի շենքային համալիրում: Պահպանման ներկայիս պայմանները չեն համապատասխանում միջազգային պահպանական չափորոշիչներին: Շենքը

ֆիզիկապես մաշված է, չունի ջերմաստիճանի և խոնավության վերահսկման կենտրոնացված համակարգից (HVAC), ինչպես նաև հակահրդեհային, օդափոխության և մթնեցման ենթակառուցվածքներ, որոնք անհրաժեշտ են միկրոկլիմայի կայունացման համար: Բացի այդ շենքում բացակայում են օդի զտման, խոնավության ավտոմատ կարգավորման և մասնիկների ֆիլտրացիայի սարքեր, ինչի հետևանքով պահպանման միջավայրը կախված է արտաքին եղանակային տատանումներից:

Պահեստների միկրոկլիման ամբողջությամբ կախված է արտաքին միջավայրից. ամռանը ջերմաստիճանը գերազանցում է թույլատրելի նորմաները (25°C-ից բարձր), իսկ ձմռանը արձանագրվում է խոնավության ավելցուկ՝ մինչև 70–80%: Այս պայմանները խաթարում են ժապավենների կառուցվածքային կայունությունը և արագացնում քիմիական դեգրադացիայի գործընթացը: Բացի այդ, շենքը զուրկ է սեյսմակայուն ամրացման և էլեկտրական անվտանգության համակարգերից, ինչը բարձրացնում է հրդեհային և տեխնիկական վթարների ռիսկը:

2024 թ. հոկտեմբերին Մաշտոցի անվան Մատենադարանի կենսաքիմիական լաբորատորիայի կողմից իրականացված փորձաքննությունը հաստատել է արխիվային ժապավենների վարակվածություն մի շարք միկրոմիցետներով՝

*Ա. Penicillium sp.,*

*Բ. Cladosporium sp.,*

*Գ. Paecilomyces sp.,*

*Դ. Mortierella sp.*

և այլ տեսակներով:

Այս միկրոօրգանիզմները հանդիսանում են ակտիվ բիոդեստրուկտորներ, որոնք ոչնչացնում են ժապավենների էմուլսիոն շերտը, արագացնում քիմիական քայքայման գործընթացը և կարող են վնասել ինչպես պահեստային միջավայրի տեխնիկական համակարգերը, այնպես էլ աշխատակիցների առողջությունը:

Բացի ժապավենային ֆոնդերից, Հիմնադրամի պահուստներում պահվում են նաև 5528 միավոր այլ կրիչներ՝ վիդեո-, ձայնային և թվային ձևաչափերով, որոնք գտնվում են նույն ֆիզիկապես անբավարար միջավայրում՝ առանց հովացման, խոնավության

հավասարակշռման և տվյալների պաշտպանության համակարգերի: Այս նյութերը դասվում են բարձր ռիսկային խմբում և պահանջում են անհապաղ տեղափոխում մասնագիտացված պահեստային տարածքներ, որոնք կունենան կայուն ջերմաստիճանային ռեժիմ (18±3°C), հարաբերական խոնավության վերահսկում (40–50%) և օդի ֆիլտրացիայի համակարգեր՝ համաձայն FIAF-ի և եվրոպական պահպանական ստանդարտների:

### բ. Տեխնիկական հագեցվածություն և լաբորատոր կարողություններ

Հայաստանի Հանրապետությունում կինոժառանգության թվայնացման և վերականգնման գործընթացները ներկայումս իրականացվում են բացառապես արտասահմանյան լաբորատորիաների միջոցով՝ պայմանավորված համապատասխան տեխնիկական հզորությունների և լաբորատոր ենթակառուցվածքի բացակայությամբ:

2022–2025 թվականների ընթացքում Հայաստանի կինոյի հիմնադրամը կարողացել է վերականգնել և թվայնացնել ընդամենը 62 գեղարվեստական և անիմացիոն ֆիլմ, որոնք ամբողջությամբ մշակվել են արտասահմանյան գործընկեր կառույցների միջոցով՝ Ռուսաստանի, Լեհաստանի, Հնդկաստանի, Լատվիայի, Իտալիայի, Էստոնիայի և ԱՄՆ-ի մասնագիտացված կենտրոններում: Այս ցուցանիշը միջինում կազմում է տարեկան շուրջ 10 ֆիլմ, ինչը համեմատած պահպանման ենթակա հազարավոր կինոժապավենների և նյութերի հետ՝ անբավարար է ազգային ժառանգության պահպանման ընդհանուր նպատակների տեսանկյունից:

Թվայնացման գործընթացի արտապատվերային բնույթը ոչ միայն հանգեցնում է զգալի ֆինանսական և ժամանակային ծախսերի, այլև սահմանափակում է Հայաստանի վերահսկողությունը սեփական կինոժառանգության մշակման, պահպանման և իրավական պաշտպանության նկատմամբ: Բացի այդ, տեխնիկական կարողությունների բացակայությունը խոչընդոտում է նաև գիտահետազոտական և կրթական բաղադրիչների զարգացումը, որոնք պարտադիր են ժամանակակից կինոարխիվային համակարգի ձևավորման համար:

Այս իրադրությունը առավել ընդգծում է անհրաժեշտությունը՝ ստեղծելու ազգային թվայնացման և վերականգնման կենտրոն-լաբորատոր բազա, որը կհամապատասխանի Ֆիլմերի արխիվների միջազգային ֆեդերացիայի (FIAF) տեխնիկական չափորոշիչներին և եվրոպական լավագույն պրակտիկաներին (CNC –

Ֆրանսիա, Cineteca di Bologna – Իտալիա, Nasjonalbiblioteket – Նորվեգիա): Նման ենթակառուցվածքի ձևավորումը թույլ կտա ապահովել կինոժառանգության վերականգնման ամբողջական ցիկլ՝ ներառյալ մաքրման, ուլտրաձայնային լվացման, գունային և ձայնային վերականգնման, բարձր լուծաչափով (4K–8K) թվայնացման և երկարաժամկետ պահեստավորման փուլերը:

ՀՀ-ում ազգային կինոլաբորատորիայի ստեղծումը կարևոր ռազմավարական քայլ է, որը կդառնա շրջադարձային կինոժառանգության պահպանման և մշակութային ինքնության ամրապնդման գործում:

### գ. Մասնագիտական կրթություն և միջազգային համագործակցություն

Կինոժառանգության պահպանման ոլորտում առկա է մասնագիտացված մարդկային ռեսուրսների պակաս և ինստիտուցիոնալ կարողությունների բաց: Բացակայում են միջազգային չափորոշիչներին համապատասխան կրթական և վերապատրաստման ծրագրեր, որոնք կապահովեին մասնագետների շարունակական զարգացումը, գիտահետազոտական հմտությունների ձևավորումը և փորձի փոխանակումը:

Ներկայումս չեն գործում կինոարխիվագիտության, ֆիլմերի պահպանության կամ թվային վերականգնման ուղղվածությամբ բուհական և ոչ-բուհական կրթական ծրագրեր: Գործնական հմտությունների փոխանցումը հիմնականում իրականացվում է անհատական փորձի մակարդակում՝ առանց համակարգային ուսուցման մեխանիզմների: Սա խոչընդոտում է ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմանը, միջազգային փորձի ինտեգրմանը և մասնագիտական ժառանգական շարունակականության ապահովմանը:

Մասնագիտացված կադրերի սակավությունը սահմանափակում է ոչ միայն ընթացիկ աշխատանքների որակը, այլև ոլորտում գիտահետազոտական բաղադրիչի զարգացումը՝ հատկապես նորարարական պահպանական մեթոդների փորձարկման և տեղայնացման առումով:

Խնդրի հաղթահարման համար անհրաժեշտ է ձևավորել մասնագիտական կարողությունների զարգացման ազգային համակարգ, որը կներգրավի.

- բուհական և միջբուհական մակարդակներում ներդրվող արխիվագիտության, թվայնացման տեխնոլոգիաների և մետատվյալների կառավարման մոդուլներ,

- պրակտիկ ուսուցման և ուսանողական փորձառության հարթակներ՝ Հայաստանի կինոյի հիմնադրամի և կրթական գործընկերների համագործակցությամբ,

միջազգային վերապատրաստման ծրագրեր և փոխանակումներ՝ առաջատար հաստատությունների՝ «*FIAF Technical Commission*, *Cineteca di Bologna (Իտալիա)*, *CNC (Ֆրանսիա)*, *Nasjonalbiblioteket (Նորվեգիա)* և *AMIA (ԱՄՆ)*» փորձի հիման վրա:

Այսպիսի կառուցվածքի ձևավորումը հնարավորություն կտա ձևավորել նոր սերնդի մասնագետներ, ովքեր կկարողանան իրականացնել կինոժառանգության պահպանման և թվայնացման ամբողջական տեխնոլոգիական ցիկլը՝ միաժամանակ ապահովելով Հայաստանի Հանրապետության (ՀՀ) ներգրավվածությունը միջազգային մասնագիտական ցանցերում և գիտահետազոտական գործընկերային նախաձեռնություններում:

Վերոնշյալ համակարգային գործոնները՝ շենքային պայմանների անբավարարությունը, տեխնիկական հագեցվածության բացակայությունը և մասնագիտական կարողությունների սահմանափակությունը, համակցված ձևով ստեղծում են բարձր ռիսկայնությամբ միջավայր, որտեղ ազգային կինոժառանգությունը ենթակա է անդառնալի ֆիզիկական, տեխնիկական և մշակութային կորուստների:

Խնդրի խորքային բնույթը պայմանավորում է անհրաժեշտություն՝ անցնելու համալիր ինստիտուցիոնալ և տեխնոլոգիական վերափոխման փուլ, որի առանցքային ուղղությունները պետք է լինեն՝

- պահպանման միջավայրի հիմնային բարելավումը,
- թվայնացման և վերականգնման ներուժի զարգացումն ու տեխնոլոգիական արդիականացումը,
- և մասնագիտական կարողությունների ձևավորումն ու շարունակական ամրապնդումը՝ համապատասխան միջազգային չափորոշիչներին:

Այս մոտեցումը միտված է կինոժառանգության պահպանության ամբողջական համակարգի վերակազմավորմանը՝ այն դարձնելով ինքնաբավ, գիտահեն և

միջազգային համագործակցությանն ուղղված ենթակառուցվածքային միջավայր, որը կապահովի ազգային կինոպատմության նյութական ու թվային ժառանգության պաշտպանվածությունը, վերականգնումը և հանրային հասանելիությունը՝ երկարաժամկետ հեռանկարում:

## II.ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Ծրագրի նպատակ և մոտեցումներ

Ծրագրի հիմնական նպատակը ազգային կինոժառանգության պահպանման, թվայնացման, օգտագործման ու հանրային հասանելիության ապահովման ամբողջական էկոհամակարգի ձևավորումն է, որը կապահովի Հայաստանի Հանրապետության կինեմատոգրաֆիական ժառանգության ֆիզիկական, տեխնիկական և մշակութային պաշտպանությունը՝ համապատասխան Ֆիլմերի արխիվների միջազգային ֆեդերացիայի (FIAF) չափորոշիչներին և եվրոպական լավագույն փորձին:

Ծրագիրը միտված է ոչ միայն պահպանման ինստիտուցիոնալ բարեփոխմանը, այլև կինոժառանգության ինտեգրմանը կրթական, գիտահետազոտական և ստեղծարար շրջանառության մեջ՝ վերափոխելով այն մշակութային և տնտեսական ակտիվի: Այսպիսով, ժառանգության պահպանությունը դիտարկվում է ոչ թե որպես մեկուսացված գործընթաց, այլ որպես բազմաշերտ և փոխկապակցված համակարգ, որը միտված էմիավորում է հետևյալ երեք ռազմավարական ուղղությունները.

1. **Ֆիզիկական և ինժեներական ենթակառուցվածքների արդիականացում՝** պահպանման միջավայրի անվտանգության բարձրացման և միջազգային պահպանական չափորոշիչներին համապատասխանության ապահովման նպատակով:
2. **Թվայնացման, վերականգնման և տվյալների կառավարման տեխնոլոգիական բազայի ձևավորում**, որը կապահովի ժառանգության վերականգնման ամբողջական ցիկլը՝ մաքրման, թվայնացման, տվյալների պահպանման և օգտագործման ու հանրային հասանելիության ապահովմամբ:
3. **Մասնագիտական կրթության և միջազգային համագործակցության զարգացում**, որը միտված է նոր սերնդի մասնագետների պատրաստմանը և պետության ներգրավմանը համաշխարհային արխիվային և գիտահետազոտական ցանցերում:



Ծրագիրը հիմնված է փուլային և համակարգային մոտեցման վրա, որը ներառում է պահպանական ենթակառուցվածքների կառուցում և տեխնիկական հագեցում, թվային տվյալների պահպանման կենտրոնի (Data Center) ստեղծում, թվայնացման և վերականգնման լաբորատոր բազայի ձևավորում, ինչպես նաև մասնագիտական վերապատրաստման և միջազգային գործընկերության ծրագրերի իրականացում:

Նախագծային մոտեցումը միավորում է տեխնոլոգիական զարգացումները և գիտահետազոտական ներուժը՝ ապահովելով գիտահեն կառավարում և ինստիտուցիոնալ կայունություն: Այս մոդելը հնարավորություն կտա Հայաստանի կինոյի հիմնադրամին դառնալ տարածաշրջանային առաջատար կենտրոն՝ մատուցելով ծառայություններ ոչ միայն ազգային, այլև տարածաշրջանային գործընկեր կառույցներին ամրապնդելով՝ պետության դիրքը որպես կինոժառանգության պահպանման և թվայնացման գիտակրթական հարթակ:

Ծրագրի իրականացումն ուղղված է նաև պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափի ներդրմանը՝ ստեղծելով ներդրումային և տեխնոլոգիական հիմքեր, որոնք կապահովեն համակարգի երկարաժամկետ ինքնաբավությունը: Այս մոտեցումը թույլ կտա դիտարկել կինոժառանգության պահպանությունը ոչ միայն որպես մշակութային պարտավորություն, այլև որպես տնտեսական զարգացման ուղղություն՝ նոր աշխատատեղերի, ծառայությունների և գիտակրթական արժեքների ստեղծմամբ:

Արդյունքում կձևավորվի նորարարական և կայուն պահպանական համակարգ, որտեղ կինոժառանգությունը դիտարկվում է որպես պետական ռազմավարական ռեսուրս՝ լիարժեքորեն ինտեգրված կրթության, մշակույթի և նորարարության ազգային քաղաքականությանը։

## III. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ (2026–2031)տես Հավելված 1



Հայաստանի կինոյի Հիմնադրամը (ՀԿՀ) նախատեսում է իրականացնել համապարփակ ենթակառուցվածքային ծրագիր, որն ուղղված է ազգային կինոժառանգության պահպանման, թվայնացման և ժամանակակից պահպանական միջավայրի ձևավորմանը։
Ծրագիրը կիրականացվի փուլային մեխանիզմով (2026–2031)՝ հիմնված պետական, Հայաստանի կինոյի հիմնադրամի և մասնավոր գործընկերության համագործակցության վրա։ Կառավարումն իրականացվելու է Հայաստանի կինոյի հիմնադրամի կողմից՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, Կադաստրի կոմիտեի և այլ պետական մարմինների հետ համագործակցությամբ։
Ծրագրի իրականացման հիմքում դրվելու են միջազգային ստանդարտներ և տեխնոլոգիական չափորոշիչներ՝«FIAF Preservation Guidelines», «ISO 18911:2010» և «EN 15757:2020», որոնք սահմանում են կինոժապավենների պահպանման միկրոկլիմայական և ինժեներատեխնիկական պահանջները։
Շենքի նախագծման և շինարարական լուծումները կիրականացվեն այս չափորոշիչներին համապատասխան՝ ապահովելով համապատասխանություն ֆիզիկական, քիմիական և թվային պահպանության միջազգային չափանիշներին։

Կենտրոնը կկահավորվի ժամանակակից ինժեներական ենթակառուցվածքներով, ներառյալ.

- HVAC համակարգ՝ մշտական ջերմաստիճանի (16–18°C) և հարաբերական խոնավության (45–50%) պահպանմամբ,
- իներտ գազով հակահրդեհային համակարգ (NOVEC 1230 կամ FM-200 տեխնոլոգիա),
- օդի բազմաստիճան ֆիլտրացիա (HEPA H14) և մասնիկների զտում,
- լուսային մթնեցման և օդափոխության ավտոմատ համակարգեր,
- ≥8 բալ սեյսմակայուն բետոնե կառուցվածք,
- ֆիզիկական անվտանգության և մուտքի հսկողության ցանց:

*FIAF Preservation Guidelines –
Կինոարխիվների միջազգային ֆեդերացիայի (FIAF) ուղեցույցներ, որոնք սահմանում են ֆիլմերի ֆիզիկական, քիմիական և թվային պահպանման չափորոշիչները:

Ա. https://www.fiafnet.org/pages/E-Resources/Preservation-Guidelines.html

ISO 18911:2010 –
Միջազգային ստանդարտ, որը սահմանում է լուսանկարչական և կինոժապավենների պահպանման միկրոկլիմայական պահանջները (ջերմաստիճան, խոնավություն, օդի շրջանառություն):

Բ. https://www.iso.org/standard/50822.html

EN 15757:2020 –
Եվրոպական ստանդարտ՝ մշակութային ժառանգության պահեստների միջավայրի վերահսկման համար՝ կանխելու համար նյութերի դեգրադացիան ջերմաստիճանի և խոնավության տատանումներից:

Գ. https://standards.iteh.ai/catalog/standards/cen/aab27064-1c0d-497c-bc85-5733d63b29c7/en-15757-2020

Կինոժառանգության ազգային արխիվ-կենտրոնի տարածքը կներառի նաև անտառապատ կանաչ գոտի, որը կծառայի որպես էկոլոգիական բուֆեր՝

ապահովելով օդի մաքրություն, բնական խոնավության հավասարակշռություն և միկրոկլիմայի կայունություն:

Կինոարխիվում նախատեսվում է ունենալ թվայնացման և վերականգնման բարձր տեխնոլոգիական լաբորատորիա, որը կապահովի կինոժառանգության վերականգնման ամբողջական ցիկլը՝ զննման, մաքրման, բուժման, թվայնացման և արխիվացման հաջորդականությամբ:

Լաբորատոր հագեցվածությունը ներառելու է.

- **Բարձր ճշգրտությամբ թվայնացման սարքեր**, որոնք վերածում են հին կինոժապավենները թվային ձևաչափի՝ պահպանելով գույների հավասարակշռությունը և պատկերային որակի կայունությունը *(օր.՝ 4K–8K ֆիլմային սկաներ)*:

- **Ուլտրաձայնային մաքրման համակարգեր**, որոնք հեռացնում են ժապավենների մակերեսային փոշին և քիմիական նստվածքները՝ առանց նյութը վնասելու *(օր.՝ Film-O-Clean Ultra System)*:

- **Զննման և տեխնիկական ստուգման սեղաններ**, որոնք օգտագործվում են ժապավենների ֆիզիկական վիճակը գնահատելու և հնարավոր վնասները հայտնաբերելու համար *(օր.՝ Electrical Inspection Table 16/35mm)*:

- **Փաթեթավորման և ոլորման սարքեր**, որոնք ապահովում են ժապավենների անվտանգ ոլորումը և հավասար լարվածությունը՝ պահեստավորման կամ վերամշակման փուլում *(օր.՝ Rewinding Table RT28)*:

- **Ձայնային և գունային վերականգնման համակարգեր**, որոնք վերականգնում են հին ֆիլմերի բնօրինակ ձայնը և գույները՝ դրանք դարձնելով դիտելի ժամանակակից տեխնոլոգիաներով *(օր.՝ DaVinci Resolve, Phoenix, Pro Tools)*:

- **Թվային տվյալների պահպանման ենթահամակարգեր**, որոնք ապահովում են վերականգնված նյութերի երկարաժամկետ և անվտանգ պահպանությունը *(օր.՝ Storage Array կամ LTO Backup համակարգեր)*:

Այս տեխնոլոգիական բազան հնարավորություն կտա իրականացնել նաև վնասված ժապավենների բուժման ամբողջական գործընթաց, որը ներառում է ուլտրաձայնային լվացում, բորբոսազերծում, չորացում, մեխանիկական ամրացում, և միայն դրանից հետո՝ թվայնացում և տեղափոխում նոր կառուցված պահեստային ֆոնդեր:

Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է ձևավորել միջազգային համագործակցություն FIAF, Cineteca di Bologna (Իտալիա), CNC (Ֆրանսիա) և Գոսֆիլմֆոնդ (ՌԴ) կառույցների հետ՝ տեղական մասնագետների վերապատրաստման և տեխնոլոգիական փորձի փոխանակման նպատակով: Այս գործընթացը կնպաստի տեղական մարդկային կապիտալի ձևավորմանը և մասնագիտական ներուժի աճին՝ հնարավորություն ընձեռելով իրականացնել կինոժառանգության վերականգնման և թվայնացման ամբողջական ծառայությունների ցիկլը ՀՀ-ի տարածքում:

Այն կնպաստի ոլորտում տեղական կարողությունների զարգացմանը, արտաքին պատվերների և արտարժութային արտահոսքի ծախսերի նվազեցմանը՝ բարձրացնելով երկրի ներսում ստեղծվող ավելացված արժեքը և ապահովելով ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում:

Միջնաժամկետ հեռանկարում կենտրոնը կդառնա տարածաշրջանային մակարդակի մասնագիտացված կառույց՝ զարգացնելով ծառայությունների արտահանման պոտենցիալը և ապահովելով Հայաստանի դիրքավորումը որպես կինոժառանգության պահպանման, վերականգնման և թվայնացման ծառայությունների մատակարար տարածաշրջանում և դրանից դուրս: Սա կնպաստի ստեղծարար արդյունաբերության արտահանման ծավալների աճին, նոր ֆինանսական հոսքերի ներգրավմանը և տեխնոլոգիական ներդրումների ակտիվացմանը ՀՀ-ի տնտեսության մեջ:

Վերոնշյալի արդյունքում կձևավորվի միջազգային չափորոշիչներին համապատասխան Կինոժառանգության ազգային արխիվ-կենտրոն, որը կապահովի հայկական կինոյի նյութական և թվային ժառանգության երկարաժամկետ պահպանությունը, վերականգնումը և հանրային հասանելիությունը՝ ստեղծելով տեխնոլոգիապես պաշտպանված, տնտեսապես կայուն և ինստիտուցիոնալ կերպով ամրապնդված միջավայր:

### *Տվյալների պահպանման կենտրոն (Data Center)*

***(իրականացման ժամկետ՝ 2026-2031)***

Ֆիլմերի երկարաժամկետ պահպանությունը յուրաքանչյուր երկրի մշակութային քաղաքականության հիմնասյուներից մեկն է: Այն ոչ միայն տեխնիկական խնդիր է, այլ նաև ազգային ինքնության, պատմական հիշողության և պետական մշակութային քաղաքականության շարունակականության հարց: Ժամանակակից աշխարհում ֆիլմերի թվային ժառանգության պահպանումը դիտարկվում է որպես մշակութային անվտանգության և միջազգային չափորոշիչներին համապատասխանության պարտադիր բաղադրիչ:

Ֆիլմերի պահպանության ոլորտում գործնականում կիրառվում են երեք հիմնական մեթոդ.

Ա.Ավանդական ժապավենների պահպանումը՝ հատուկ լաբորատոր պայմաններում, որտեղ ապահովվում են Ֆիլմերի արխիվների միջազգային ֆեդերացիայի (FIAF) պահանջներին համապատասխան միկրոկլիմայական ռեժիմներ (հովացում, խոնավության վերահսկում, օդի զտում):

Բ.Տեղային (on-premises) թվային պահպանումը՝ սերվերային ենթակառուցվածքներով և LTO tape գրադարաններով, որոնք համարվում են ֆիլմերի պահպանության ընդունված միջազգային ստանդարտը:

Գ.Ամպային պահպանումը (Cloud Storage)՝ որն օգտագործվում է միայն որպես օժանդակ կամ կրկնօրինակային շերտ, սակայն ոչ որպես հիմնական պահոց, քանի որ այն ծախսատար է, ունի ցածր արագություն և սահմանափակ վերահսկելիություն:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ «միայն ամպային» (cloud-only) լուծումները չեն ապահովում բավարար կայունություն կինոժառանգության համար: Ֆիլմերի ֆայլերը ունեն մեծ ծավալ (տասնյակ տերաբայթեր մեկ ֆիլմի դեպքում), բարդ ֆորմատներ և մշտական հասանելիության պահանջ: Այդ պատճառով, աշխարհի առաջատար արխիվները կիրառում են հիբրիդային մոդել՝ տեղային սերվերային և LTO համակարգերի համադրությամբ:

FIAF-ի “Digital Statement Part V” (2019) փաստաթղթում արձանագրված է, որ հարցված արխիվների գերակշիռ մասը կիրառում է սերվերային և tape համակարգեր

որպես հիմնական պահպանման միջոց, իսկ ամպային ծառայությունները՝ միայն որպես կրկնօրինակային շերտ:
2023 թ. Digital Preservation Coalition-ի զեկույցը հավելում է, որ պահպանության ապահովման համար անհրաժեշտ է առնվազն երեք պատճեն.

- երկու պատճեն՝ LTO Tape գրադարաններում,

- երրորդ՝ ամպային կամ ֆիզիկական backup ձևաչափով:

Այս մոտեցումն այսօր կիրառում են ավելի քան 150 կինոարխիվ՝ 77 երկրում, որոնք ընդգրկված են FIAF-ի միջազգային ցանցում: 2022 թվականից Հայաստանի կինոյի հիմնադրամը ևս անդամակցում է FIAF-ին, դառնալով այս համաշխարհային փորձի կրող և գործընկեր:

Միջազգային առաջատար փորձ

- British Film Institute (BFI National Archive) – 2012 թվականից կիրառում է Master Archive Storage (MAS) համակարգը, որը միավորում է սերվերային ենթակառուցվածքը և «tape» գրադարանը՝ ապահովելով տվյալների կրկնօրինակված և կառավարվող պահպանում:
- Library of Congress Packard Campus (ԱՄՆ) – համարվում է աշխարհի ամենամեծ տվյալների կենտրոններից մեկը՝ ավելի քան 100 PB (պետաբայթ) հզորությամբ, «tape» համակարգերով և բազմաշերտ կրկնօրինակման մեխանիզմներով:
- Centre National du Cinéma (CNC, Ֆրանսիա) – գործում է «Bois d’Arcy» ֆիզիկական պահեստը և առանձին Data Center՝ OAIS և ISO 16363 ստանդարտների հիման վրա:

Այս օրինակները հաստատում են, որ ֆիլմերի թվային ժառանգության պահպանման արդյունավետ և անվտանգ մոդելը հանդիսանում է ֆիզիկական տվյալների կենտրոնի (Data Center) և օժանդակ ամպային ծառայությունների համադրությունը: Այդպիսով, Հայաստանի կինոյի հիմնադրամի կողմից «Հայֆիլմ» կինոստուդիայի տարածքում Տվյալների պահպանման կենտրոնի ստեղծումը լիովին համապատասխան է միջազգային հաստատված փորձին, ապահովում է տեխնիկական ինքնավարություն և երաշխավորում է կինոժառանգության երկարաժամկետ անվտանգ պահպանումը՝ անկախ արտաքին ռիսկերից և մատակարարներից:

## Կինոժառանգության ազգային արխիվ-կենտրոնի
## Տվյալների պահպանման կենտրոն (Data Center)



Տվյալների պահպանման կենտրոնը կծառայի որպես կինոժառանգության թվայնացված արխիվացման, ինչպես նաև կինոարտադրական և հետարտադրական նյութերի մշակման, պահման և փոխանցման միջուկային հանգույց: Կենտրոնի նպատակն է ապահովել համապարփակ, վերահսկելի և տեխնիկապես պաշտպանված տվյալային միջավայր՝ հայկական և միջազգային մշակութային հաստատությունների համար:

Գլխավոր գործառույթներ.

### Ա. Թվային պահպանում և կրկնօրինակում

- Տվյալների երկարաժամկետ պահպանման ապահովում՝ LTO-9 կամ բարձր սերնդի մագնիսական ժապավենային համակարգերով, որոնք երաշխավորում են առնվազն 30 տարվա անվտանգ պահպանման ժամկետ:
- Կրկնօրինակում՝ «on-site» և «off-site» պահեստավորման հարթակներում՝ նվազեցնելով տվյալների կորստի կամ վնասման ռիսկը:
- Կիրառվող միջազգային չափորոշիչներ՝ *ISO 14721 (OAIS Reference Model)* և *ISO 16363 (Trusted Digital Repository Certification)*:

### Բ. Տվյալների կառավարման և մետատվյալների համակարգ

- Ներդրվելու է միասնական մետատվյալների կառավարման հարթակ, որը կապահովի կինոժառանգության թվային ֆայլերի ինդեքսավորում, որոնելիություն և կապակցվածություն Հայաստանի ազգային կինոռեեստրի հետ:
- Կիրառվելու են FIAF Cataloguing Rules և Dublin Core Metadata Schema ստանդարտները՝ ապահովելով միջազգային համատեղելիություն:
- Կտրամադրվի կարգավորված մուտքի վերահսկում՝ հիմնված օգտվողների մակարդակային իրավունքների վրա (read/write/admin access):

### Գ. Ֆիլմարտադրական և հետարտադրական տվյալների սպասարկում

- Կենտրոնը կտրամադրի տեխնիկական ռեսուրսներ նաև կինոարտադրական գործընթացներին՝ ներառյալ ֆիլմերի թվային «raw» նյութերի պահպանություն, մշակման միջանկյալ ֆայլեր (intermediate files) և հետարտադրական նախագծերի արխիվացում:
- Սա թույլ կտա կինոարտադրողներին ապահովել նյութերի անվտանգ փոխանցում և պահպանում պետական հարթակի միջոցով՝ նվազեցնելով տվյալների կորուստների և արտահոսքի ռիսկը:

### Դ. Միջազգային տվյալային փոխանակում և հասանելիություն

- Կենտրոնը կմիավորվի միջազգային մշակութային տվյալային ցանցերին (Europeana, FIAF Global Catalogue), ապահովելով հայկական կինոժառանգության թվային հասանելիությունը միջազգային հետազոտական և կրթական կառույցների համար:
- Կստեղծվի ծրագրային ինտերֆեյսային միջավայր, որը հնարավորություն կտա իրականացնել տվյալների ավտոմատ և անվտանգ փոխանակում գործընկեր հաստատությունների, ազգային ու միջազգային կինոփառատոնների, ինչպես նաև հետազոտական և կրթական պլատֆորմների հետ:

### *Ինչու սերվերային լուծում և ոչ թե ամպային*

Կինոժառանգության երկարաժամկետ պահպանությունը պահանջում է կայուն և պաշտպանված տվյալային ենթակառուցվածք:Այս նպատակով ծրագիրը նախատեսում է սերվերային լուծումների ներդրում, որոնք կապահովեն թվային

նյութերի անվտանգ պահպանումը, կրկնօրինակումն ու մուտքի վերահսկումը՝ համապատասխան միջազգային արխիվային չափորոշիչներին:

Միևնույն ժամանակ, այս որոշումը միայն տեխնիկական ընտրություն չէ. այն կապված է ազգային ինքնության պահպանման, մշակութային ժառանգության փոխանցման, ինչպես նաև պետական քաղաքականության՝ միջազգային ստանդարտներին համապատասխանեցման գործընթացի հետ:

Ֆիլմերի պահպանության ոլորտում միջազգային չափորոշիչների շրջանակում գործնականում կիրառվում են երեք հիմնական մեթոդ.

- Ավանդական ժապավենների պահպանումը՝ հատուկ հովացման և խոնավության վերահսկման համակարգերով լաբորատորիաներում ու պահեստներում, որտեղ ապահովվում են FIAF-ի պահանջներին համապատասխան միկրոկլիմայական պայմաններ,
- Տեղային (on-premises) թվային պահպանումը՝ սերվերային ենթակառուցվածքներով և LTO tape գրադարաններով, որոնք համարվում են ընդունված միջազգային ստանդարտ,
- Ամպային ծառայությունները (cloud storage)՝ որոնք կարող են կիրառվել որպես օժանդակ կամ կրկնօրինակային շերտ, սակայն ոչ որպես հիմնական պահոց, քանի որ դանդաղ են, ծախսատար:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ «միայն ամպային/only-cloud» լուծումները ֆիլմերի համար չեն ապահովում բավարար կայունություն: Տվյալների ծավալները հսկայական են, ֆայլային ձևաչափերը՝ բարդ, իսկ մշակման գործընթացները պահանջում են արագ հասանելիություն և լիարժեք վերահսկողություն:

Կինոարխիվների միջազգային ֆեդերացիայի (FIAF) Digital Statement Part V (2019) փաստաթղթում արձանագրված է, որ հարցված արխիվների մեծ մասը երկարաժամկետ պահպանման համար կիրառում են սերվերային համակարգեր: Սա նշանակում է, որ ֆիլմերի երկարաժամկետ պահպանման ընդունված միջազգային մոտեցումը սերվերային և «tape» համակարգերի համադրությունն է, այլ ոչ թե cloud-only ձևաչափով պահպանումը: FIAF-ի մասնագիտական ուղեցույցները նաև ընդգծում են՝ ապահով պահպանության համար անհրաժեշտ է ունենալ առնվազն երեք պատճեն. երկու պատճեն LTO tape համակարգում և երրորդը՝ որպես օժանդակ

կրկնօրինակ (backup), որը կարող է լինել ամպային ձևաչափով, բայց ոչ որպես հիմնական պահոց (Digital Preservation Coalition, 2023):

